

Գրական Թերթ

ISSN 1829-1627

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԱՐՎԱԹԱԹԵՐԹ * ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1932-ԻՑ




Նորայր ԱԴԱԼՅԱՆ

Այս երեք տասերի համատեղումը՝ ավել, լատիններենում օրհնանք, օրհներգ իմաստն ունի, մարդկությունն ի խորոց սրտի խոսք ու երգ է ասում աստվածամայր Մարիային, նա, ով մարդկությանը դարձրեց ավելի մարդկային և աստվածահաճո: Մարիան հայերիս ներկայանում է նույնարժեք տատերով՝ Մարիամ, իբրև նույն ու նման երկվորյակներ, մեկ միասնական հոգի ու

է (Դրեզդենի պատկերասրահ): Մի խոսքով՝ համաշխարհային գեղարվեստական մշակույթը, նաև գրականություն ու թատրոն, մի զգալի չափով «Ավել Մարիա» են աղոթում, և սա նրան դարձնում է առավել հոգևոր և առաքինի:

Այսօր 2025 թվականի ապրիլի 24-ն է: Ավել Մարիա և Մարիամ: «Գարուն ա, ձուն ա արել»: Հայ ժողովրդի պատմության վկա Արարատը իր հավերժական ձյուններից արցունք է քանում: Այժմ մեր արտասուքը լաց ու կոծ չէ, այլ՝ մշտապես կենդանի հիշողություն համայն հայության զգացմունքներում ու գիտակցության մեջ և համախմբում է մեզ ազգային գաղափարախոսության շուրջ:

Յուրաքանչյուր ապրիլի 24-ին հայ ժողովուրդը տանայակ հագարավոր շարքերով բարձրանում է սարն ի վեր՝ խոնարհվելու իր երկու մոլիտն ցեղասպանված հարազատների անմար հիշատակի առջև: Լուռ ենք: Բարի, ճշմարիտ, առաքինի աշխարհն է լուռ: Այդպես լուռ աղոթք ենք ասում նրանց՝ Ավել Մարիա-Մարիամ: Արդյոք երկու միլիոն: Ո՛չ: Այս թիվը կրկնապատկեք ու եռապատկեք, քանզի ներկայումս ապրող ամեն հայի հոգում կա ցեղասպանության ողբերգությունը, և



Գուրգեն ԽԱՆՁՅԱՆ

Լուսանկարների ալբոմը թերթելիս որքան էլ աշխատեմ խուսափել, չի ստացվի, եթե ինքս էլ չբացեմ, ինքն իրեն է բացվում, ու գալիս է այքիս ընդառաջ՝ Դուդուն՝ մեծ տատա...

Ծալծված մաշկի անկանոն խորշոմացանցի միջից՝ կարոտով ներծծված հայացք, որը քեզ չի վերաբերում, անորոշ հեռուներին է ուղղված, բայց քեզ է նայում, ու չես փախչի այդ հայացքից, որ կողմ էլ թեքվես, գտնում է քեզ...

Ես մտք չունեմ քո անհատակ կարոտի համար, Դուդու, թեքիր հայացքդ, ուրիշ կողմ նայիր...

Չէ, ինձ է նայում:

ՄԵԾ ՏԱՏԻ ՄԵԾ ԿԱՐՈՏԸ

«Քյա տղա, կլոխոյ կոռի, կլոխոյ կոռի...»,- զգուշացնում է Դուդուն իր անատան, փափուկ «վաներենով», մեծամասամբ՝ ուշացած, երբ գլուխդ արդեն խիստ ես լինում մուտքի ցածր քիվին. դեհ, արդեն իննսունին մոտ էր, արձագանքներն՝ ուշացող, ինքն էլ զգում էր, որ ուշացել է ու զգուշացնելիս արդեն ծիծաղում էր, կծկվում էր ու ցնցվում ամբողջ փոքրիկ մարմնով:

«Միրան, կհիշեն, աղջիկ ինք, կերթինք դաշտեր կլապիս», - ասում էր նա իմ տատին՝ իր դստերը, մոռացած, որ երբ ինքն աղջիկ էր և վազվզում էր Վանա ծովակի առափնյա դաշտերով, Միրանը դեռ չկար, չէր կարող լինել, բայց Դուդուն շատ էր պետք, որ լինի մեկը, որն այնպես էր, որի հետ կարողանա կիսել իր նվիրական հիշողությունները, թող որ՝ ժամանակային խախտումներով, նրա ենթագիտակցությունը թույլատրում էր դա:

«Մերիկ, դու գծվել ես, մտածիր ապա՝ երբ դու աղջիկ էիր, ես ո՞ր էի», - փորձում էր մորը ուշքի բերել տատա:

«Է՛ խա, ես աղջիկ ի գյո...»,- միտքը լարում էր Դուդուն, հանկարծ կռահում ու քրքջում կարմրատակած: Սակայն ժամանակ անց ենթագիտակցությունը նորից էր խաղում իր խաղը՝ «Միրան, կհիշեն...»:

Ես այն ժամանակ չէի հասկանում այդ երկխոսությունների ամբողջ նրբությունն ու խորքը, այլապես տատիս կասեի՝ թող ասի, դու էլ հաստատի, ասա՛ հա, հիշում եմ:

«Քյա տղա, ախր շատ խորոտ էր էնա երկիր, շատ, ուր մովինք՝ տեղին ոսկի: Էսա քար-քան ինչ ի ինոր դեմ...»,- սկսում էր պատմել՝ հուսալով, որ կլսեմ: Իսկ իմ ուշքում մտքը դրսում էր, քաղաքը կանչում էր, Դուդուն լսելու ժամանակ ու «հավես» ո՞վ ուներ, չէի հասկանում, թե դա ինչքան կարևոր էր երկիր կորցրած մեծ տատիս՝ Վարդանուշին, որին Դուդուն՝ տան մեծ կին անունով էին կոչել: Հիմա լինե՛ր՝ ժամերով կլսեի հազար անգամ լսածս, հանուն նրա, հանուն կորցրած երկրի, հայրենիքի, նահատակված հարազատների, չէ՛ որ նրա խոնավ, խմորի պես փափուկ խոսքը այդ մասին էր՝ ինչի մասին էլ լինե՛ր, նույնիսկ՝ երբ ասում էր. «Միրան, քո հերթը կանցնի մկա, Լևոնի խանութի միս կխատնի գյո», - ասում էր, որ հաջորդ պահին հիշի.

ԱՊՐԻԼ 24, ԱՎԵ ՄԱՐԻԱ

մարմին: Եփեսոսի Տիեզերական երրորդ ժողովը (431 թ.) Մարիամին հռչակեց աստվածամայր, որի երկրպագությունը տարածվեց քրիստոնեական և կաթոլիկ աշխարհներում: Ի սկզբանե ապրելով Եվրոպա մայրցամաքի հարավ-արևելյան սահմանամերձ բնության մեջ՝ մենք ոչ միայն ֆիզիկապես էինք արտահայտում արևմտյան կյանքի ելևէջումները, այլև օրհներգերով, մտքը ու հոգեղենությամբ, որը, գիտակցե՛ք, հայ ժողովրդի շարունակելիության գլխավոր, ամենագլխավոր հիմունքն է առ այսօր, երբ բարբարոսները եկան ու գնացին և կզանան, այո, չար երագի պես:

Ավել Մարիա - Մարիամ:

Այս աղոթք-օրհներգը բառերով գրեթե չի խոսում, այլ՝ հիմնականում՝ երաժշտությամբ: Ով չի լսել այս դրամատիկ ու վայելչագեղ երաժշտությունը, որն, ըստ իս, աշխարհի հրաշալիքներից մեկն է, նա գտնվում է հոգով աղքատների շարքում: Շատ կոմպոզիտորներ են այս մեղեդիին անդրադարձել՝ անելով որոշ շեշտադրումների աննշան խմբագրումներ: Ահա, օրինակ, Ֆրանց Շուբերտի «Ավել Մարիան»: Բազմաթիվ անհատ կատարողներ ու երգչախմբեր էլ այն ներկայացնում են ժողովրդյան հարթակներից: Լուչիանո Պավարոտին, լսում եք, հրաշալի ու ինքնահատուկ է երգում: Շառլ Ազնավուրն այն ներկայացրեց հայերի ցեղասպանության հուշահամալիրի անմար կրակի մոտ: Բայց ինձ ամենից ավելի ցնցել է տասներկուամյա հայուհի Վիկա Հովհաննիսյանի ոչ երկրային, այլ՝ երկնային երգեցողությունը՝ ըստ Ջուլիո Պաչինիի երաժշտության:

Մարիա-Մարիամ աստվածամորը պատկերել են նաև նկարիչները՝ Բոտիչելլի, Լեոնարդո, Ռաֆայել Սանտի, վերջինիս «Միքստիսյան տիրամայրը» այս օրհներգի գլուխգործոցներից

անիմաստ է «հատ-հատ հաշվել, թե քանի հայ է մահացել 1915 թվականից առաջ ու հետո, կարող է պարզվել՝ շատ ավելի քիչ»...

Այն, լինենք իրատես, ծովից ծով հայրենիքից հետո այսօր ունենք համեմատաբար շատ ու շատ փոքր, սակայն իրական Հայաստան, ջանք չխնայենք գորացնելով պահպանելու նրա անկախությունը, պետականությունն ու արժանապատվությունը, չդառնանք ինչ-որ մեկի գուրբերիան, բայց դրա համար՝ այժմ ասեմ ամենակարևորը... Իրական Հայաստանը կհզորանա, եթե մենք ազգովին ու պետականորեն տեր կանգնենք մեզ թև ու թիկունք հայ ժողովրդի հազարամյակների պատմությանը և հիշողություններին, որոնք այսօր, տագնապով նկատում են, ենթարկվում են վտանգավոր այլեկոծումների: Չտեղավորենք մեր պատմությունն ու հիշողությունը փակ դռների ետևում գտնվող մութ արխիվներում, այլ՝ որ դրանք մշտապես լինեն աչքի առջև ու լույսի մեջ: Անցյալ չկա, անցյալը ևս ներկա ժամանակ է: «Չկամենաք շքեղ շենքերի հայրենիք դարձնել մեր հայրենիքը, այդպիսի հայրենիք ես չեմ ուզում (ես էլ, դուք էլ - Ն. Ա.), հոգու և մտքի հպարտությամբ ճոխացնենք նրան» (Վահան Տերյան, «Հոգևոր Հայաստան», 1914 թ.): Ոչ ոք իրավունք չունի զենքով, որևէ կերպ, քաղաքական խաղերով մեզանից խլելու մեր պատմությունը, որ գրով ու բանիվ ապացուցում է՝ ով ենք մենք, որտեղից ենք գալիս և ուր ենք գնում: Տեր Աստվածն էլ իրավունք չունի և չի կարող դա անել, եթե անգամ շատ ցանկանա՝ հանդիպելով մեր էքզիստենցիալ կամքի անշեղ դիմադրությանը:

Ավել Մարիա և Մարիամ...

Եվ փառք հավիտյանս հավիտենից:

Ամեն:

ՄԵԾ ՏԱՏԻ ՄԵԾ ԿԱՐՈՏԸ

Սկզբը՝ Էջ 1

«Է, շեն մա շեն տուն... Իմ խոր տուն շեն էր ու շեն, տավար կմորթին, կտորած միս կիփին մեծ պղնձի մեջ, կթողին սառի, ապա շերտ-շերտ կշարին կծուների մեջ, արդար յուղ կշրջին վեր ինք, կմաք, կպաղեր, կլներ դավուրմա, կպալիսինք, ձմեռ կխանինք, կուտինք գյո... Բայ տղա, էսա երկրի ամեն բան խամով էր, վանա տառեխ լսեր ես, խա, էտա տառեխ ծովուց կբռնին, կբերին, կմաքինք, ալրի մեջ կթաթախինք, պոչ կխտ-




թինք պիրան՝ կկապինք՝ կմոցնինք թունիր, բոպեական կիփեր գյո, անմահական էր: Ապա խորություն... Քերթած օխչար կկախինք թունիր, քյամակն ի վեր, որ դմակի յուղ վրով գաաա, կաթա սինիով կորկուտի վրա, թունրի բերան ցեխով կծեփինք, իրեյ խատ ձվաչափ ցեխի գունդ կղնինք խուփին, երբ գնդեր չուրնան, խորություն իփերի գյո, խան դուս իփած-կարմրած օխչար, սինիով փլավ, վայ չուտողին-վայ չխմողին... Մեղան կնստիկ մեր ամփողով, խուտաղ էլ մեր խետ, իմ հեր շատ շոտղ մարդ էր, հըմենին կհասներ... Ախ իմ հերիկ, այս իմ մերիկ...»: Լուում էր տխրած, քթի տակ ինչ-որ երգ երգում անտարբերելի, ապա դարձյալ. «Բյա տղա, տուն օրերին զոզոն շորեր կհագնինք, զարդեր կկապինք, կերթինք կղզի, նավ կվարձինք, նավով կերթինք, առաջուց կմտնինք եկեղեցի, մոմ կվառինք, կաղոթինք գյո, մեռնեն ասծուն, հետո կենինք տուս, էսա տեղ, մեծ այգու մեջ, մարդիկ մատաղ կանին՝ հայր, աղունիկ, գառ... շվիկ կիփին, գոտնա, դիող կխափին, պար կբռնին, խաղ կխաղին... Առջի անգամ ես իմ մարդուն էտա տեղ տեսա, իրիշկացի՝ ամչցա, փախա, ես ինորից կանչնայի, է խա, ես մե մատ աղջիկ ի, էսա՛ արդեն բեղ-մորուսով պետ մարդ... Բայ շատ լավ մարդ էր... Ասկյարներ խատցուցին գյո...»:

Դուրուն հիշում էր իր տասներկու զավակներին, բայց արդեն շփոթում էր, անունները չէ, հաջորդականությունը, զուգ զավակներին էլ մեկի անունով էր անփոփում՝ «Ջուլիտ Հրո, ջուլիտ Բրադ»: Գաղթի ճամփի փախեփախին կորցրել էր նրանց, Երևան հասնելով՝ մնացել էին երեք դուստրերը՝ Հրանուշը, Հայկանուշը, Սիրանուշը: «Հրանուշ շատ խորոտ էր, տղա, բայց խիվընդցավ խեղճ, ճար չեղավ, խլսավ...»: Մինչ գաղթական Վարդանուշ-Դուրուն բնակության տեղ ու ապրուստի միջոց

եր փնտրում, նրա տասներկու զավակներից ողջ մնացած երկուսը՝ Հայկանուշն ու Սիրանուշը, տեղավորվեցին ամերիկյան մանկատանը, բայց դա կարճ տևեց, Դուրուն ինչ-որ հողաշեն, կիսափող տուն գտավ «Չարլի մայլի» մոտերքում, ապա՝ էլի հողաշեն, բայց քիչ ավելի բարվոք բնակատեղի Տերյան փողոցի թիվ 56 տանը և մանկատանից վերցրեց իր դստրիկներին: Դուստրերը մեծացան, կրթություն ստացան, ամուսնացան, սակայն Սիրանուշի ամուսնուն, երգնկացի Ներսեսին՝ իմ պապին, որ Հայաստանի նորաստեղծ համալսարանի կենսաբանության բաժնի վարիչն էր, երեսույթթին արքայեցին մի ինչ-որ մատնագրի պատճառով, Թումանյան փողոցի նրա բնակարանը խլվեց, տատա, փոքրիկ հորս հետ, վերադարձավ Տերյան 56, մոր՝ Դուրուի մոտ: Հետագայում, խրուշչովյան հայոցքի տարիներին, Ներսեսին արդարացրին, հետմահու, նա իր մահկանացուն կնքել էր քարոքում, հեռավոր Օրենբուրգի կողմերը, խլված բնակարանը վերադարձրին, այնտեղ բնակվեց հայրս իր ընտանիքով, իսկ տատա՝ Սիրանուշը, մնաց մոր հետ, Տերյան փողոցի հողաշեն տանը:

Ահա, այդ տանն էր, որ մի օր ակնատես եղա տարօրինակ տեսարանի. անթակել մտել էի սենյակ, և ինչ՞ Դուրուն, որ արդեն ութսունն անց էր, գրկել էր հորիքալի մեծաղիք նկարն ու շոյում, համբուրում էր, ինձ տեսնելով՝ հանկարծակիի եկավ. «Աբար, սև կապեմ-կապոտ կապեմ, քյա խերով խերաքյունի լաճ, ինդր իկար, որ չիմացվեց...»: Գարզվեց կատակի հարևանները՝ Մաքսիմն ու Հազոն, խեղճ պանովիկին համոզել էին, որ սովետների թագավորը որոշել է հայոց հողերը ետ բերել: Լեոնիդ Իլյիչ Բրեժնևը Վանը թուրքերից խլելու՝ Դուրուին էր վերադարձնելու, ո՞նց չգրկեր, չհամբուրեր նրա նկարը Դուրուն...:

Ինչ էլ ասեր, ինչ էլ աներ, լար թե խնդար՝ կարոտը դուրս չէր գալիս նրա աչքերից՝ Վանա ծովի, դաշտերի ու սարերի, իր Ջանիկ գյուղի, հայրական տան, կորցրած հարազատների կարոտը: Երբեմն, երբ նայում էի քնած Դուրուին, թվում էր՝ հիմա եթե ետ տանեմ կուպերը, աչքերին, ինչպես էկրանին, կտեսնեմ նրա կարոտների պատկերները: Սիրուն արդեն լավ չէր աշխատում. «Բյա տղա, իմ սիրտ էսպես կխափի, որ էսա կարավաթ մոնչ կչխչիփի»՝ ասում էր, բայց դիմացավ, դիմացավ, մինչև բանակային ծառայությունս ավարտեցի, վերադարձա. թշերս պաչպչեց, հոտոտեց, խաղաղվեց ու ազատ թողեց իրեն՝ հաջորդ օրը, քնի մեջ, հոգին ավանդեց, համբառնաց, գնաց իր կարոտների ծովակի ալիքների վրա սավառնելու, իր Ջանիկ գյուղն ու իր հայրական տունը գտնելու: Այստեղ մնաց այս միակ լուսանկարը՝ գլխաշորը կզակի տակ կապած, դեմքը՝ ամբողջովին խորշումածակ, աչքերում՝ հայրենիքի կարոտը, ամբողջ էության չափով կամ անչափելիությամբ...:



Էդվարդ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

Եթե Հիսուս Քրիստոսը հայտնվի ժամանակակից քրիստոնեական աշխարհում, չեն գարնանա, որ աղոթք մրմնջացող, սաղմոսներ մեջբերող ինչ-որ սեկտաներ կամ հենց հայտնի քրիստոնեական ուղղությունների հետևորդներից ոմանք կնկատեն, կհրավաճանեն, կ, թող բերանս լավվի, կտանեին ի խաչ:

ԵՐԵՄՈՒՆ ԱՐԾԱԹԻ ԶՆԳԶՆԳՈՅԸ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ

Քրիստոնեական աշխարհում հայտնի հզոր երկրներում և՛ ոչ հզոր, քրիստոնեական ոգին նահանջում է, շատ տաճարներ ու եկեղեցիներ վաճառվում են, էլ չեն ասում՝ բարքերի անհասկանալի հակաքրիստոնեական խեղաթյուրումները:

Չասեմ երկերեսանիության, կրկնակի ստանդարտների, քրիստոնյաների հալածման ու սպանության հանդեպ անտարբերության մասին:

Աշխարհում հիմա հույս է թևածում, թե ԱՄՆ-ի պրեզիդենտ Դոնալդ Թրամփը տեղ կկանգնի քրիստոնեական արժեքներին: Տա՛ Աստված:

Սակայն հենց այս ժամանակ Վատիկանը ներկայացնում է Ադրբեյջանում քրիստոնեության պատմության խեղա-

թյուրված, բոլորի բաց աչքերի դեմ անամոթ աչքակապություն:

Իսկ ո՞ր կրոնի հետևորդներին են ջարդել Սուրբաթիում, Բաքվում, Կիրովաբադում, Արցախում: Եվ ո՞ր կրոնի դարավոր հավատացյալներին են բոլորովին վերջերս իրենց հայրենիքից ֆոսֆորային ռումբերի տեղատարափով բռնի տեղահանել... 120 հազար արցախցիների: Ավերել նրանց պատմական հուշարձանները, խաչքարերը, սեփականել նրանց եկեղեցիները, թթվ պատմության վրա: Հիշենք նաև Ջուդայի խաչքարերի ջարդը Նախիջևանում:

Միթե Վատիկանը տեղյակ չէր այս ամենից:

Միթե գազ ու նավթի գումարները երեսուն արծաթի զնգզնգոցը չունեն:

Ո՞ւր համար են դողանջում լուրջամբ գանգերը:

Իհարկե, խուլ ականջների, կույր աչքերի և ունայնություն ունայնության:

Ցավոք, 2025 թվականի Ավագ հինգշաբթի օրն եմ գրում այս տագնապի գանգահարության ճիշտ:

Հ. Գ. - 2015 թվականին չէր, որ Վատիկանում մեծ խորհրդի երկյուղածությանը հիշարակեցին հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Միթե չչարունակվեց ցեղասպանությունը Արցախում: Միթե դժվար է պարմության Էջերը շաղկապել, մանավանդ որ նոյն այդ ցեղասպանության 110-րդ տարելիցն է մոլորենում: Ինձ թվում է՝ ոմանց համար պարմությունը դերձակի մկրարով կամ մնագործի կացնով կորրելու, ջարդելու, մա-մաա բաժանելու և փրսանալու համար է:

17 ապրիլի, 2025 թ

գրական անցուղարձ գրական անցուղարձ գրական անցուղարձ

ՅԵՐԵՄՈՒՆ ԵՐ ՀԵՆՐԻԿ ԷՂՈՅԱՆԻՆ

Ապրիլի 14-ին Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում տեղի ունեցավ բանաստեղծ Հենրիկ Էղոյանի 85-ամյակին նվիրված գրական ցերեկույթ, որը վարում էր Գայանե Մամվելյանը: Ողջույնի խոսքով հանդես եկավ գրադարանի տնօրենի ժ/պ Ռուզաննա Բարսեղյանը՝ փոխանցելով գրադարանի տնօրինության և աշխատակազմի ուղերձը: Գայանե Մամվելյանը ներկայացրեց ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանի ուղերձը:

Հենրիկ Էղոյանի ստեղծագործության մասին խոսեց գրականագետ, բ.գ.դ. Պետրոս Դեմիրճյանը՝ բնորոշելով նրա ստեղծագործությունը որպես մի աշխարհ, «ուր ժամանակն ու տարածությունը, մարդու կյանքը, կենսական արժեքներն այլ չափումներ ու չափանիշներ, այլ հարաբերություններ ունեն, ուր ոչ թե սիրտն է բաբախում ժամանակի մեջ, այլ՝ ժամանակն է սրտի մեջ բաբախում»: «Հենրիկ Էղոյանի բանաստեղծությունն իր արմատներով խորանում է մինչև հին աշխարհի բանավոր ու գրավոր ավանդույթները, որոնք միջնադարի գրական հայտնի հոսանքների և ուղղությունների՝ մասնավորապես կլասիցիզմի հեղինակների ստեղծագործությունների միջոցով փոխանցվել են ժամանակակից բանաստեղծին՝ պայմանավորելով անվախճան ժամանակների կապը», - ասաց նա:

Հ. Էղոյանի ստեղծագործությունների

վերլուծությանը հանդես եկավ գրականագետ, բ.գ.դ Սուրեն Աբրահամյանը: Նա խոսեց 60-ականների սերնդի, նորարական գրականության ու այդ համատեքստում՝ Հենրիկ Էղոյանի պոեզիայի, նրա գրապատմական, խոհափիլիսոփայական և հոգևոր հիմքերի մասին: Ս. Աբրահամյանը նշեց, որ տպագրության է նախապատրաստում մնագործություն Հենրիկ Էղոյանի պոեզիայի մասին:

Հ. Էղոյանի ուսանողների կողմից գնա-



հատանքի ու երախտիքի խոսք ասաց ԵՊՀ-ի շրջանավարտ, բանասեր Գեղեցիկ Մարգարյանը:

Հենրիկ Էղոյանը խոսեց հայ և համաշխարհային գրականության, արվեստի, ստեղծագործելու մասին և ընթերցեց իր բանաստեղծություններից: «Գրականության մեջ ամենակարևորը ոգին է, այն պետք է կարդալ. բանաստեղծություն գրելը այդ ոգին կարդալու ձև է», - նշեց նա:

Ցերեկույթի ընթացքում Գայանե Մամվելյանի ընթերցմամբ հնչեցին Հենրիկ Էղոյանի բանաստեղծություններից: Ցուցադրվեցին տեսանյութեր՝ ներկայացնելով Էղոյանի խոսքը գրականության, արվեստի ու մշակույթի մասին:

Նաիրա ՀԱՄԱՐԱՑՅԱՆԻ ՄՅՈՒՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

«Կիթառ» հանդեսը: 1861 թվականին Էլյաիս Կեսարացյանը հիմնել և խմբագրել է «Կիթառ»՝ ամսօրյա հանդեսը, որի առաջին համարը տպագրվել է 1862 թվականի օգոստոսի մեկին Կ. Պոլսում: «Կիթառը» աշխարհում առաջին հայալեզու հանդեսն էր՝ կանանց մասին և կանանց համար: Հանդեսի նշանաբանն էր՝ «Հրավեր հայկազն օրհորդաց», որով պայմանավորվում և կարևորվում էին հանդեսի՝ որպես ազգային պարբերականի պատմական, գաղափարական և բովանդակային արժեքները: Հանդեսը գնահատվել է նաև օսմանյան բռնապետության մեջ ապրող հայ մտավորականների կողմից:

Ժամանակի հայրիշխանական ընկալումների ու բարբերի, ինչպես նաև սուլթանական գրաքննության պատճառով «Կիթառ»-ի խմբագրուհին օգտագործել է ծածկանուն և իր հոդվածները ստորագրել է «Ե.Կ.Տ. Հայկուհի»²: Այս մասին տեղեկանում ենք 1906 թ. «Ծաղիկ» հանդեսի տասնյոթերորդ համարից, որում հրապարակված, գրագետ Հրանտ Ասատուրը գրում է. «Օրհորդ Էլյաիս Կեսարացեան իբր խմբագրուհի կը ստորագրէ Ե.Կ.Տ. Հայկուհի: Կերևնայ թէ ժամանակին համար իր ձեռնարկը անսովոր կը նկատէ, հետևաբար Օրհորդը չի համարձակիր իր բուն անունով հրապարակելը»³:

«Ծաղիկ» հանդեսի նույն անդրադարձից տեղեկանում ենք նաև, որ առաջին համարի հրապարակումից հետո «Կիթառը» յույս է տեսել ընդամենը յոթ ամիս և տպագրվել է միայն յոթ համար⁴:

Բանասեր Հրանտ Ասատուրը գրում է, թե Հայր Գրիգորիս Գալէմբեարեանը «ազնուաբար հաճեցաւ» ցույց տալ իրեն «Լրագրութեան Պատմութեան ձեռագրին այն մասը, որ կը վերաբերի Կիթառին, և ուրկէ կը տեղեկանամ թէ եօթը թիւ միայն հրատարակուած է այդ կնոջական հանդէսը, որ պէտք է դադարած ըլլայ 1863 թվականի առաջին վեց ամիսներուն մէջ»⁵:

Ինչո՞ւ «Կիթառ» և ո՞րն էր հանդեսի նպատակը:

Այս հարցերին Էլյաիս Կեսարացյանը պատասխանում է «Կիթառ» հանդեսի «Յառաջաբան»-ում, որում դիտարկում է նաև ազգասիրության, հայ տիկնանց ազգօգուտ գործերին, մայրերի և դեռատի օրհորդների (նաև պատանիների) էթիկայի, բարոյականության, ճաշակի, վարվեցողության հիմնական դրոշմներին առնչվող հարցեր:

Նա կարևորում է նաև կրթության և դաստիարակության հիմնական դրոշմները, որոնք ժամանակի եվրոպական քաղաքակիրթ մտեցումների և ճաշակի ձևավորման ենթատեքստում են՝ «Այժմ վարժապետաց շատ քաջակիրթ անձինք ըլլալով դաստիարակութեան կանոններուն տեղեակ են և գիտեն իրենց խստութիւնը Ազգին օգտից նուիրել նոցին հօգօր ջանքերը արդեանց լիակատար սէրը չեն վայելեր, եթէ տղայք ամենին անկիրթ ծնողաց, մանաւանդ մարց ապօրինի պաշտպանութեան մատնուած ըլլան <...> դաստիարակութեան ամենանուրբ և կարեւոր պաշտօն մըն է. բարոյական շինութիւն կը կազմուի:

<...> եթէ Օրհորդ չունենան ուղիղ

Էլյաիս Կեսարացյանը (Տողրամաճյան) ծնվել է 1830 թվականին Կ. Պոլսում: Նա առաջին հայ կին լրագրողն էր, առաջին կին խմբագիրը, գրողը, հրապարակախոսը և առաջին ֆեմինիստուհին, իսկ «Կիթառը»՝ առաջին ֆեմինիստական հանդեսը Կ. Պոլսում: Կրթությունը ստացել է Օրթագյուղի, ապա Պեշիկթաշի Տարսանների հայկական դպրոցներում (Օսմանյան կայսրություն):

«Կիթառ» հանդեսում և, ընդհանրապես, պոլսահայ մամուլում տպագրած էստենները, առ հայրենիները

դաստիարակություն, եթէ ունենան կարևոր ուսմունք, և թէ մոլս գաղափարները չտողին ճշմարիտ գիտութեան կանոններով, պիտի չի կարենան ժամանակին յատկացեալ պաշտօնը յառաջ տանիլ, որով մարդը իր նպատակին շահուց չի կարեր հասնիլ»⁶:

Էլյաիս Կեսարացյանի հայացքն ուղղված էր դեպի Եվրոպա: Գրական,

գրած նամակները, իմաստասիրական մրբերը և հոդվածները հեղինակն ուղղել է ոչ միայն իրեն, այլև բոլոր ժամանակներում ապրող և արեղծագործող կանանց:

1879 թվականին հրատարակել է «Նամականի առ ընթերցաւեր հայուհիս» ժողովածուն:

1872 թվականից, որպես ուսուցչուհի, աշխատել է Մարրուխյաց վարժարանում: Աշխատակցել է պոլսահայ մամուլին:

Էլյաիս Կեսարացյանը մահացել է 1913 թվականին, Գալուր-գյուղում:



Էլյաիս Կեսարացյան (1830-1913)


Ազգային երգեր, պատմություն, ուսուսուրներ և առակներ:

Սոյն անուամբ պատշաճ սեպած են կոչել, որ «Կիթառը» իր մեղմ եղանակաւ պիտի հնչէ ուսումնասէր Տիկնանց և Օրհորդաց փափով զգացմանց Ազգասիրութեան և ուսման սէրը, կրթութիւն, քաղաքավարութիւն և համարձակութիւն հանդերձ պարկեշտու-

զին: Նա հայոց այրերին առաջարկում էր չմնալ տգիտության մեջ և բռնել լուսավորության ճանապարհը, ինչպես Եվրոպան է այդ անում:

Կանանց առաջին պարբերականը՝ «Կիթառը», դադարել է գործել 1863 թվականի մայիսին. ըստ պաշտոնական տվյալների՝ նյութական միջոցների բացակայության պատճառով⁸:

ԷԼՊԻՍ ԿԵՍԱՐԱՑՅԱՆԸ ԵՎ «ԿԻԹԱՌ» ՀԱՆԴԵՍԸ՝



«Կիթառ» հանդեսը

թեամբ, արթնություն շահավոր գործերու մեջ, և ժրութեամբ փոյթ ունենալ օրհորդաց անշուք վիճակը կրթութեան գեղեցիկ ձիքերով բարեգարդելու:

Եւ թէ՛ Կիթառիս լարերը քաջ ներդաշնակութիւն չունենան այլ հայրենի և Ազգուն սէր հնչելու համար գուցէ ախորժելի ընծայի ընկերակցացս»⁷:

Էլյաիս Կեսարացյանի առաջադիմական հայացքներն ու գաղափարները միանշանակորեն չեն ընկալվել և ունեցել են բազմաթիվ ընդդիմախոսներ՝ ի դեմս օսմանյան բռնապետությունում ապրող հայրիշխանական հայկական սոցիումի, որը առաջնայնությունը տալիս էր պահպանողականությանը, ավանդույթին և առաջնորդվում էր կարծրատիպերով:

Կեսարացյանի էստենները ընթերցելիս, սակայն, պարզում ենք, որ հեղինակը ոչ թե արմատապես մերժում է ավանդույթն ու ավանդականը, այլ՝ առաջարկում է դրանք պահպանելով՝ լինել նորարար և զարգացնել ազգը, քանի որ լավ գիտակցում էր, որ օսմանյան կայսրությունում գոյատևման առաջին նախապայմանը ազգայինից չհեռանալն է: Նա առաջարկում է բարեփոխել սոցիալական բարբերը, քաղաքացի կարծրատիպերը, դոգմաները և տարրերը, որոնք համընթաց չեն նոր ստղանավորվող աշխարհակար-

Չնայած հանդեսի դադարումից հետո Կեսարացյանը մոտ տասնհինգ տարի հեռացել է գրական-մշակութային միջավայրից, բայց և այնպես իր հրապարակախոսական հոդվածներով շարունակել է աշխատակցել միայն պոլսահայ մամուլին, հատկապես՝ «Մասիս» պարբերականին:

Բանաստեղծությունը:

Էլյաիս Կեսարացյանը գրել է նաև բանաստեղծություններ, որոնք ունեն հայրենասիրական բնույթ: Ավելի ուշ՝ 1879 թ. հրատարակված «Նամականի առ ընթերցաւեր հայուհիս»⁹ գրքուկում տեղ են գտել հեղինակի բարոյախարատական, էթիկական և գեղագիտական բնույթի մանկավարժական հոդվածները, բանաստեղծությունները, նամակները, էստենները:

Բանաստեղծություններում առկա է ազգի ճակատագրով մտահոգ կնոջ ձայնը, որ և՛ մայր է, և՛ քույր է, և՛ Հայկազուն օրհորդ: Նա կնոջ ազատությունը ուղղակիորեն նույնացնում է ազգի ազատությանը՝

Արդ՝ փութացեք Հայկեան կուսանք դուք սիրով,

Պճնիլ համայն վսեմ փառաց գարդերով,

Ո՛հ փութացեք լնուլ սրտիս իմ կարոտ,

Ամմահություն հիստեմ ճակտիցդ նաբուտ¹⁰:

Էլյաիս Կեսարացյանի արժեքանական համակարգում կարևորվում են ոչ միայն սոցիալական, իրավական, ազգային և քաղաքական գիտակցությունն ու դրանց դրսևորումները, այլև ազգասիրության, ազգօգուտ գործերին, հայ տիկնանց և աղջիկների կրթությանը, էթիկական և բարոյական չափանիշներին առնչվող հարցերը:



Ռոբերտ ԵՍԱՅԱՆ

ՌԵՔՎԻԵՄ

Սև սամուռը եղեռնական մոլեգնում է Արցախյան տարբ լեռների մեջ: Վարդան Հակոբյան

Մի բռն խավար թաղելով հողում՝ սպասում են (թորքերը), թե ուր որ է բուսնելու է լուսաբացը, այնինչ ելնում են հողաթմբից ծաղիկներ Ոսկորի... Ռոբերտ Եսայան

Մոխրի հորիզոն, շատրվան
ցավի,
Դիվային կրքեր և անհայտի
դճու...
Հայաստան...
Ճակատագրի ավեր
հիշատակի ճիչն է:
Մուրճի հարվածներ՝
Ճառագայթի սպիտակ
սալերին...
Դարբնոցում ոգու
վերածնվում են գրերը հայոց...
Եվ ճառագում է վեմը Անհունի...
Հողը
քո անվան տառերից ծլարձակող
հոնդ է...
Եվ ծառը ոգու մի փոթորիկ է,
որ ծաղկել է հինա
այս տարածության ըմբռնումից
դուրս...
Հայաստան...
Հավատի նորահայտ խաչ է,
ագատության միակամ երթ է
գաղափարների քառսի վրա...
Եվ հայացքիս թաքստոցում
ծաղիկն համբուրում է
ծնունդը վաղվա:
Եվ գոյության տեղից ժայթքող
արցունքները
հավատի խաչքարեր են...
Մորմոքների վիհ, լույսի
պատարագ,
կարոտների ծիր և Անհունի
կանչ...
Հայաստան...
Ապագայի ոտնաձայները
համբույրների դոներ են,
սպագայի ոտնաձայները
հավատամքի խաչեր են,
սպագայի ոտնաձայները
հույսի աշտարակներ են...
Մերս դառնում է աչքը հավքերի,
իսկ սովերիս ճյուղերը
մոխիրներ են...
Հիշողության խաչքար է
անունը տարածության:
Վարդերի խղ հրդեհների միջից

ցայտում են աստղերը հուշերի,
և ոսկրափայլը անշիրիմ գոհերի
փորձում է ճերմակ իր
սավաններում
բարուրել ու փրկել
հավատը վաղվա...
Աշխարհ, աշխարհ...
Ոգու անապատ, երագի անդունդ,
կարոտի հրդեհ և հողմի
գագաթ...
Հայաստան...
Աներկինք երագները
ավերված լուսամուտներ են:
Սև ձեռք:
Կարմիր խիղճ:
Կապույտ անուն:
Փշրվող խաչքարերն են
վերածվում
մոռացության ավագների...
Համբուրում են
ծաղիկը տարածության,
և խղճի վիհերից բարձրանում է
հրեշտակը Հույսի...
Հայացքս՝ թիրախ,
ուր մխրճվում են
ճիչերն Անհունի:
Փլվում են դարպասները
արքայական դարերի...
Ցավս իր լույսով է
ճանապարհորդում...
Խոսքն իր բեռներն է նետում
անդունդը...
Հետքերիս վրայով գլորվում է
երկինքը՝
լուսավորելով խավարը Խղճի...
Գետի ընթացքը
ճանապարհունվում է
դիակով հույսի:
Քարերը դոներ են
մեղքաքավության:
Գիշերվա պատյանն է քարշ
տալիս հողմը
դեպի դատարկություն:
Վայրենի ոգու սմբակների տակ
կոխկրտվում են
մագաղաթե բիբերը քո
պատմության:
Հայաստան...
Համբուրում են
ծանոթը բառի՝
որպես բաբախող ոգին իրերի:
Ազատության լույսն է
աղաղակում
եկեղեցիներից քարե
բռունցքներում:
Պարիսպներից լույսն մեջ
փաթաթվում են
հրեշտակները
և լան սրտի զարկերը
տառապյալ հողի...
Արցունքից մեն մի կաթիլի տակ
փլվում է տանիքը
մրջնանոցի...
Հայաստան...
Ոլիս անապատ, կայծակնահար
ծառ,
մոլոր ուղևոր ու ցավի անտառ...
Հարության հրեշտակները
տանում են
տողերիս ոսկորները՝
որպես ջահեր...
Խոշտանգված դեմք է իմ
ճանապարհը,
որի արցունքները քարեր են
գլորվող...
Հիշատակի ճիչ է քո ամեն
բառը...
Թող քառս իր թևերով
հարվածի
դահիճ-փողոցներին,

ուր հայի տները
դամբարաններ են...
Մահվան հրդեհն է տարածում
մագիլները...
Նորածնի բարուր: Աչքերի
փոխարեն՝
կայծկլտացող մոխիրներ,
որոնք քեզ են նայում խորքից
պատմության...
Տենդի հրդեհն է տարածում
մագիլները...
Քաղաքական խաղերն
ավարտվում են միշտ էլ
փոքր ազգերի տեղահանությամբ
կամ բնաջնջմամբ
լրիվ, մասնակի.
Նայած թե խոշոր տերությունների
շահերի հողմը ճր ուղղությամբ է
մարտավարելու...
Հայաստան,
քաղաքականությունը
թիզ առ թիզ կնի է գնում
նավթային ախորժակին
Կասպից շնաձկան,
նր է Թուր-Կայծակին,
որով պիտի որոշվեր
սահմանագիծը իրականության:
Փողոցում ընկած հայացքը
բարձրացնում են,
դնում ժամանակի հենարանների
վրա:
Տոհմածառից ճյուղից կաթկթող
արյունը
իմ երանգ է:
Ահա թիրախը:
Քո խիղճը
բեկնում է
ներքնատեսության...
Փայտատակակն երկինք,
նստակյաց Խավար,
տառապանքի խորան և
տանջանքի Հովազ...
Հայաստան...
Հայացքիդ անդունդը
լցվում է
ճիչերով
աքսորյալների...
Ընկնող վարագույր է
մահն Առաջնորդի,
որով ջնջում ենք անվերջանալի
հետքերն Աղետի...
Բառերը բանտեր են,
որոնցից կորզում են
ագատությունը իմ
լեռնաշխարհի...
Պտտահողմ է
իմ ձայնը:
Քամիները
կտուցներով կարմիր
խմբանկարն են պատռոտում
գոհերի,
պատմության և իրականության
միջև
ձգվում է
խավարը,
և դիվահար են լինում ձկները-
կարթերից
կախված են լուսաբացները...
Հայաստան...
Ջարմանքն Արարչի՝
մի գոհասեղան,
ուր փլուզվում է
ամեն հենարան...
Երկրում և երկնքում
օրորոցներն են փշրվում
հրեշտակների:
Վերածննդի հետքերով վագում է
պատարագը լեռների:
Ես իմ քայլերով
հասունացնում եմ ռիթմերը

ժամանակի:
Արյան կաթիլներից ելնում է
եկեղեցին:
Ջանգի դողանջներով
վերադառնում է
խիղճը աքսորյալ:
Հայաստան...
Ձեռքերի ճիչեր
Պատերի ճերմակ աղերսանքի
վրա
թքում է
դևը
Հավատի անդաստաններ
որ կոխկրտում է զարշաշունչ
հողմը
Մեղքի անդամ գորքը
խրախճանում է
փողոցների կույր խոռոչներում
Եվ բարբարոսի դիմակն ընկնում
է
կուրքերի կարմիր հետագծի վրա
Տենդի ճանապարհ, փակագիծ
հույսի,
աղոթքների սյուն և դեզերող
սեր...
Հայաստան...
Դարերը վիհեր չեն
այլ՝ զսպանակ Ասքի,
քարտեզն անդունդ չէ,
այլ՝ ճանապարհ Ելքի...
Իմ տառապանքից ցայտում են
աստղերը...
Իմ հիշողությունը թաղթվող
աչքերն է մագաղաթների...
Մենք սերմեր ենք ցանել
մեր որբ ճակատներիս,
համաճակատ հերկից
ծով հավստ ենք հնձել...
Հայաստան
Ես հատում եմ սահմանը Խղճի:
Եղեռնական անտառներով ես
տանում եմ
ոսկորները նախնիներիս,
որ շիվերի պես տնկեմ
ագատագրված հողում...
Բողբոջում են ճյուղերն իմ
հիշողության...
Նախնիներիս հետքերում մումեր
եմ վառում,
ինչպես... տաճարում...
Հայաստան...
Մորթվող հորիզոն է
իմ ամեն բառը,
և ընթերցարան՝
երկնային կանչը,
հայացքը քարի:
Մոլեռանդության փրփրած ալիքը
քշում-տանում է հավատամքի
սյունը...
Եվ ժամանակը արյունոտում է
թևն հրեշտակի:
Եվ ես իմ ցավից մի քայլ առաջ
եմ
ընթանում հինա:
Ջագաչապիկ է
խիղճը աշխարհի:
Ելքը ծաղիկն է...
Իմ լեռնաշխարհը հենվում է
դարին
օրհնված տառով,
ճիչով ծնվողի...
Պատմության ճիչից արթնացած
երանգ՝
Երկիր Հայաստան...
Մորմոքների վիհ, լույսի
պատարագ,
կարոտների ծիր և Անհունի
կանչ...
Հայաստան...



ՀԱՎՈՒՔ ԿԱՐԱՊԵՆՑ

Տափարակ դաշտ ու ներքին պարայություն: Պերսեպոլիս կամ գուցե Նի Մերսիկո: Ուզում եմ անպատճառ յիշել: Վերապրողներ լինեին, նրանց կը հարցնեի: Սակայն հայրս մահացավ մտքաբեկությամբ տարի առաջ, իսկ մայրս՝ երկու: Հորաքոյրներս էլ մահացան - Սաթենիկ, Վարդանյոյ, Աստղիկ: Ինչպե՞ս յիշել Սաթենիկ հորաքոյրի սրբուհու գեղեցկությունը: Նրա աչքերից կարծես յախտնությունն էր կաթում: Երբ յիշողություն չկայ, իրականություն էլ չկայ: Յիշողությունը ներկան է: Գրականությունից բացի, բոլոր արվեստները ներկան են արտացոլում: Մաթիսի 1937 թուին նկարած Կապոյտ Հագուստով Կինը շարունակ ինձ է նայում իր կարմիր բազկաթոռի միջից: Կամ Արշիլ Գորկու 1947 թուին ստեղծած Հոգեվարքը չի վերջանում, թեև ատելի քան կես դար է անցել: Անցեալ տարի Էմմայի հետ Խաղաղականի ջրերում թրջեցինք մեր ոտքերը, յուսալով որ այդպիսով հաղորդություն կը լինի աշխարհի բոլոր ովկիանոսների հետ: Ո՞վ էր Էմմայի հայ ընկերուհին, որն այնքան սև խոշոր տրտում աչքեր ուներ: Այս տարի, արձակուրդս Ատլանտանի մեկուսի մի ափում պիտի անցկացնեմ, թող ով ինչ ուզում է ասի: Ո՞վ է ջնջում յիշողությունը. ո՞վ է խեղդում մանկության առաօտը, որ այսպես ամայի են դարձել քաղաքները: Հազիս յիշում եմ թրքական հայրուհիս, ուսական ծիծաղը, ֆրանսական քայլերգը, հայկական սերը: Ո՞ր մնաց իմ սերը: Առանց սիրոյ ինչպե՞ս ապրեմ: Բոլոր կանանց մէջ ամենից լավը հայ կինն է սիրում, պայմանով որ նա լինի ազատ ու ինքնամատուց: Որքան որ յիշում եմ, ես միշտ սիրել եմ, յաճախ սերը սիրոյ համար, սիրելով սերը, առանց ակնկալություն, աստղերի պէս, ծովերի պէս:

Շոտական Վառլան Համա-նուազը ներկայ է, հենց այս պահին: Վիվալդիի շարունակ ներկայ է իմ սենեակում: Սակայն Վիվալդիի Հիւզոյի Թշուառները ընկալելու համար պիտի վերադառնալ ժամ Վալթանի 19-րդ դարը: Իսկ յիշողությունը յաճախ չար խաղեր է խաղում: Յիշում եմ թե ինչպէս ձմերուկ էինք գողանում ինչոր հեռաւոր մի քաղաքում, իսկ այսօր նրա թախիծը տարածուել է Նի Եորքից մինչև Մոնրեալ, Լոս Անջելոսից մինչև Ման Ֆրանսիսկո: Այլևս ուշ է: Գնացողները ուշացել են. մնացողները շարունակ յետև են նայում: Հիմա ինչ անենք որ աշխարհը այսպէս է: Համբիկն ու ես մազլոցում էինք Պարոն Մարգարենց կտորը և չիր ու չամիչ գողանում: Այս բոլորի մասին կարելի է մի վէպ գրել և շրջանակի մէջ քարացնել ժամանակը, որպէսզի մարդիկ մնան անվիատ: Չ՞ որ ամէն ոք իր

թշուառությունը շալակած՝ ման է գալիս փողոցներում՝ մտածելով որ իր խաչը ամենից ծանրն է աշխարհում:

Երբ մանկութեանս տունն եմ վերադառնում, ամենուր փոշի եմ տեսնում: Այդ որչանի փոշուտ էր Պարսկաստանը - փոշի, արև ու ոսկի: Լիբանանը այդպէս չէր: Լիբանանը կանխահաս հարս էր, որ տակաւին մանուկ, կնութեան էին տարել: Չգիտեր ինչը ինչ էր: Ես հենց այդպէս էլ միմեանց սպանեցին գերդաստանի անդամները, մինչև որ այլևս մարդ չմնաց: Մնաց Միջերկրականը և նրա կապոյտ ջրերում վաղահաս մանկութեան փշրանքները: Մարդ պիտի ստանայ որ տալ կարողանայ: Ինչպէ՞ս նուիրել երբ կեանքը քեզ գլացել է սէր, մանկություն ու խայտանք:

Այսինքն, ծնող լինելուց առաջ պիտի գաւակ լինել, պառկել ծովափում և զգալ արևի ջերմությունը արեանդ առուակներում. պիտի արև ամբարել հոգու սափորում՝ գաւակներին սեր բաշխելու համար: Ահա թէ ինչու ես ու իմ ժամանակակիցները անկատար, անհատում, անհանգրուան ու անյագ մարդիկ ենք: Չգիտենք որտեղից ենք գալիս, ո՞ր ենք գնում:

Հիմա արդէն ուշ է: Ես իմ ծնողների հետ կոռուելով բաժանուցի, և յանկարծ բաժանումը դարձաւ յախտնական: Այդ աշխարհ ինչ-որ իրարանցում եղաւ փողոցում: Խառնուցի իրարանցումս, ինձ գետին տապալեցին: Ուտիկանները եկան, ինձ բանտ տարան: Առաօտեան հայրս եկաւ, կաշառեց ուտիկանապետին, ինձ տուն տարաւ: Ադ օրուանից սկսեցի ատել ոյժ ու իշխանություն: Յիշում եմ Բասրան ու Բաղդադը: Յիշում եմ գեղանի Բէյրութը: Մտովին յաճախ թափառում եմ Փարիզի փողոցներում: Ինչու եմ այդքան սիրում Փարիզը, ինքս էլ չգիտեմ: Ամերիկեան քաղաքները համ ու հոտ չունեն, եթէ ունեն, ապա նկարագիր չունեն: Ինչէր եմ ասում, երբ փաստօրէն Բոստոնը մշակութային յարատև ասանդություն է, Նի Եորքը ահարկու ստեղծագործություն, իսկ Ման Ֆրանսիսկոն՝ մշտափոփոխ պատրանք, երբ չգիտես ո՞ր է վերջանում տեսիլքը և ո՞ր սկսում իրականությունը: Այդ տարի, նոր տարուայ գիշեր, երկու ուսանողներ կուտում էին ճաշարանում, Քանգաս Սիթիի հարաւային թաղում: Երբ միջամտեցի, դարձան իմ դէմ և արիւնտեցին քիթս ու ականջս: Կապոյտ աչքերով մի կին թաշկինակով մաքրեց դէմքիս արիւնը և ինձ տուն տարաւ: Առանց փորձի ինչպէ՞ս ապրել: Առանց ապրումի, ինչպէ՞ս ստեղծագործել: Ի վերջոյ այս կեանքից դուրս ուրիշ կեանք չկայ: Կամ պիտի լինել կամ չլինել: Նախընտրելի է լինել որքան հնարատր է շատ ու կենդանի ամէն վայրկեան բոլոր բջիջներով զգաստ ու արթուն՝ ըմբռնվելով ամէն մի պահը, գոյնների ամէն մի խաղը, համ ու բոյրը անցնող վերջալոյսերի:

Այս ամառ, մտածում եմ անցած ամառների մասին և յուշը ներկան է: Անցեալը յուշ է նրանց համար ովքեր ներկայ չունեն: Մի տեղ, մի առաօտ կանգ է առել ապրումը և նա շարունակ անցեալի արահետներն է փորփորում մի պուտ ժպիտ, մի կտոր սեր գունելու յոյսով, երբ երէկն ու այսօրը մնացել են չպեղում զաղտնիքներ: Անցեալ

տարի նրանք հանդիպեցին Դիգնիլանդում, իսկ այս տարի ծովաչեայ Լինդան, 31 տարեկան ու վիպապաշտ, յղի է սիրով, կեանքով ու ապագայով: Բերկրանք է ծորում նրա լուսեղէն այտերից: Ես իրենց համար շարժական օրօրոց եմ նուէր տարել այն յոյսով, որ մարդկութեան մանուկը պիտի խայտայ սիրոյ թների վրայ: Ես շատ բան չգիտեմ մանկութեան մասին: Մէկ էլ աչք ես բացում, տեսնում ես երեկոն կախուել է կեանքերի վրայ: Գոնէ ժամանակ տան որպէսզի մարդ մի քիչ ատելի երկար հետապնդի կապոյտ թռչունները: Ամէն ոք իր գաղտնիքը ինձ է պատմում: Մէկը չեղաւ որ ականջ դնէր իմ

Հակոբ Կարապետց - 100

պէտք չունէր ստեղծելու: Նա կար: Նա է: Նա լինելու է:

Սկզբնական տարիներին հայն էր: Յետոյ հայը դարձաւ փոքրամասնություն՝ ծով մեծամասնութեան մէջ: Սակայն մնաց հայ անկախ իր կամքից: Այդպէս էր տնօրինում: Ուրիշները կէս-կէս են: Հայերը, մեծ մասամբ, ամբողջական են: Հայը հայի հետ: Քո հայերէնը չաշխարհիկ երգ է: Քո երգը սփոփիչ սպեղանի է: Քո հայությունը ինքնատիպ ամբողջություն է աշխարհի բոլոր քաղաքներում: Այդուհանդերձ

ՏԱՐԱԾՈՒՈՂ ԿԷՏԵՐ*

գաղտնիքին: Ես հիմա այնքան շատ կեանքերի պատմություն գիտեմ, որ մտնացել եմ իմ սեփական կեանքի պատմությունը: Այդուհանդերձ, մի չքնաղ կիրակի յայտնաբերեցի իմ մահկանացիությունս, և այդ օրուանից ի վեր նա դարձել է իմ բոլոր օրերի պահապանը, իմ անբաժան հեքը և ապրումներիս կիզակետը:

Յուշերը գալիս են ամպերի պէս, շերտ առ շերտ, բախում միմեանց, քերում երկնքի կործքը, ապա կերպարանափոխուելով դառնում սիրամարգ, վիշապ կամ վիթխարի մի կին՝ տարածուելով, տարածուելով մինչև հորիզոն, ու դու ես մենակ ու Աստուած: Եթէ յուշ չկայ, ոչինչ չկայ: Եթէ յուշ չի եղել, ոչինչ չի եղել: Սկիզբ ու վերջ չի եղել: Ահա թէ ինչու լուսեղէն ովապիս է անցեալը, որը փաստօրէն սկիզբ է առնում ներկայից ինչպէս յոյսի զուգահեռական սկզբները, որ մի տեղ տիեզերքում պիտի հանդիպեն՝ ջրելով տիեզերքի անվերջություն տեսությունը: Այդ չի նշանակում սակայն թէ Աստուած նոյնպէս սահմանափակ է: Նա կարող է բազմաթիւ տիեզերքներ ստեղծել՝ ապուշութեան մասնելով մարդուն: Բայց պատահում է, որ ժամանակը դանդաղում է, յատկապէս Արևելքում, յատկապէս մանկութեան տարիներին, յատկապէս երբ դու հեռու ես ինձանից:

Ինձ թում է, թէ ես միշտ էլ վազելիս եմ եղել քեզ հետ հասուն հասկերի ծփանքներում: Ես բռնում եմ քո ծոծրակը: Քամին տակաւին հպում է քո այտերը: Քո վրայից քրտինքի և երիցուկի բոյր է գալիս: Հում ցորենը այնքան ծամում ես մինչև որ ծամոն է դառնում: Քո բերանի վրայ ցորենի կաթ կայ:

Հիմա աշխարհագրությունը հալածում է ինձ: Ամերիկայի արևելքում արդիւնաբերական եռանկյունը այլևս խեղդիչ է դարձել: Երկրի կենտրոնական նահանգներում ինձ թակարդում եմ զգում: Կալիֆորնիան իր արտառոցութեամբ հանդերձ, կարծես ինչ-որ ժամանակաւոր հանգրուան է, ահագին ու մեկուսի, այլ աշխարհների խոստումով: Ումանք Նի Եորքից Բոստոն գնալիս, կանգնում ինձ բարև են տալիս: Մոնթրէլ: Կէս գիշերին բացօթեայ լողաւազան տասերորդ յարկի կտորի վրայ, տաք գոլորշի ու ծիծաղ, ճիշտ մանուկների պէս: Երբ սիրում ես մէկին, ստեղծում ես նրան: Նրան ես աստուածուհի եմ ստեղծել: Սակայն նա

զգում եմ արքայի գունատ հեքը ամէն մի քայլիդ մէջ, իմ ամէն մի քայլափոխի մէջ: Ինչու արքայը: Աքարից առաւել՝ արքայականի գաղափարը: Թերևս ամէն ոք ծնուած օրից կորցնում է իր պատկանելիությունը: Թերևս իրականում արքայն է, անկախ այն հանգամանքից թէ հայ ես, ռուս, չինացի թէ ֆրանսիացի: Մնացեալը քո է ու դիմակ՝ մի կերպ թաքցնելու օտարութեան զգացումը այս օտարտի աշխարհում:

Ինչպէս ամէն ինչ, աշուն էլ փարթում է Ամերիկայում, գոնէ այս բլուրների վրայ, ուր գտնում է իմ տնակը: Սակայն ես ներկան մտնացած՝ շարունակ աշխարհի միս կէսն եմ երագում: Այստեղ եղած ժամանակ, այստեղն եմ կարօտում: Ահա թէ ինչու շարունակ ճամբորդում եմ, քաղաքից քաղաք եմ ցատկում և մտքումս ասում՝ Հայաստան: Խնդիրն այն է, որ իմ դէմքի տակ ես զգում եմ այն, ինչ ամէն ոք է զգում, եթէ նոյնիսկ ես ճափոնացի կամ աֆրիկացի լինեի: Ասելիքս այն է, որ ամէն մի քաղաքում յուշերի ահագին դէզ եմ թողել, որոնք շարունակ քեզ են կանչում: Մարդ մը յիշի, մը մոռանայ, երբ մեր ուզած-չուզածը մի բեկոր անսակարկ սէր է, այս է ու կայ, մնացեալի տակում բան չկայ: Ես ուզում եմ լինել քո կարդալիք գիրքը, քո տեսնելիք պատառը, քո լսելիք երաժշտությունը, քո հոտոտելիք ծաղիկը, որպէսզի քո էություն մէջ մի կերպ պարփակեմ իմ էությունը: Տեսնում ես՝ որքան համեստ է իմ պահանջը և որքան վերացական, կարծես այս աշխարհի ծնունդ չլինեմ: Քրեատէնն ու Օլաւը նորվեգիացի են:

Ինձ ձուկի ընթրիք են խոստացել շաբաթ օրը: Տարին երկու անգամ ինձ ձուկ են տալիս: Երկուսն էլ անհամօրէն գեղեցիկ են ու բարի իրենց երկրի պէս, սկանդինաւեան բոլոր ժողովուրդների պէս: Ես իրենց պատմում եմ Հայաստանի մասին: Նրանց ամենից շատ հետաքրքրում է Հայաստանի արևը: Իսկ ես շարունակ քո մասին եմ մտածում և զարմանում, թէ ինչու եմ քեզ այսքան շատ սիրում: Ամէն ինչ քեզ է յիշեցնում, իսկ ամէն մի յուշ դառնում է իրականություն և լցնում ինձ, քաղաքն ու աշխարհը:

Փաստօրէն, անցեալը խուժում է ներկայի մէջ, դառնում ներկայ: Ինչ-որ գնացքներ են սուրում հեռաւոր կիրճեր:



ԺԻԼ ԼՅՈՒՍԱԿ

Անշիրիմ
Նահապետների հիշարարակին

«ՀՆԱՐԱՎՈՐ Է ՑԵՂԱՍՊԱ-
ՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԺԵԼ»

Հարցն ինձ ուղղեց վերապրողների երրորդ սերնդի մի հայուհի, որի նախնիների, ինչպես մի ամբողջ ժողովրդի բնաջնջման վճիռը Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարն էր կայացրել հետևյալ բառերով. «Վերացնել բոլոր հայերին... Բարոյական ու նյութական ամբողջ պարասխանապոլությունը ես եմ սրանձնում»:

Հայուհու հարցապնդման նման ուղղակի ձևակերպումը ինքնին ենթադրում է պատասխանի բարդությունը՝ ցեղասպանության հետևանքները հնարավոր վերացնել, առնվազն՝ մեղմել:

Հասկանալի է՝ տառապանքից բխող նման հարցերը հազվադեպ չեն, և որքան ժամանակն անցնում է, այնքան ավելի ու ավելի հաճախ են տրվում բուժող բժիշկներին ու մեզ հանգեցնում են հիմնախնդրի բանաձևմանը:

Մակայն կարծեմ, որ ցեղասպանության հիմնախնդրում հնարավոր բանաձևում գոյություն ունի, կնշանակի խուսափել բուն հիմնախնդրից, այսինքն՝ նպաստել, որ հիմնախնդիրը ինքնաբերաբար այլակերպվի, քանի որ Իրականությունից խույս տալու սողանցք ընդհանրապես գոյություն չունի: Ընդհակառակը՝ Իրականությունն է Խորհրդանշականի ոլորտը թափանցող սողանցքներ գտնում, ընդ որում հաճախ աղմկարարությամբ է ձայնը լսելի դարձնում:

Ցեղասպանության հետևանքները բուժառույթի հոգեբանությունում դիտարկելը հանգեցնում է հետևյալ երկնությունը պարզաբանելն է: Այսինքն՝ միանգամայն խրախուսելի համարելով հանդերձ բուժական միջամտությունը, այլ կերպ ասած՝ կանխարգելական ջանքերը՝ միաժամանակ չի կարող չծագել հնարավոր հետևանքների, դիցուք՝ բուժառույթի այլակերպման, թերևս տարօրինակ թվացող հարցը: Բացի այս հիմնական հետևանքներից, պետք չէ անտեսել նաև բուժող բժշկի՝ ապաքինմանը միտված շարունակական միջնորդավորումը: Արդյոք հիվանդասենյակը այն միակ հարթակն է, որ կարող է պատասխանել Հոր, Իշխանության ու Հավատի անգործության հարցին:

Համբավավոր պատմաբան Գի Ռիչարդի կոթողային աշխատությունում ցեղասպանության հայեցակարգի մասին հետևյալ նորությունն ենք հանդիպում. «Համապարասխան ախտորոշումը լավ կլինի բուժող բժիշկը, նախընտրելով

Ֆրանսիացի հոգեվերլուծաբան Ժիլ Լյուսակի (հայկական անուն-ազգանունը չի հրատարակում) ճակատագիրը ցեղասպանված հայ ժողովրդի ճակատագիրն է: Նա սերում է Մալաթիայի բարեկեցիկ նահապետական ընտանիքից, 1895-ի համադրյալ ջարդերի պարճատով նախնիները, զոհեր տալով, լքում են իրենց բնօրրանը, փախչում Մեքսիկա, 1915-ի ցեղասպանության պարճատով, դարձյալ զոհեր տալով՝ Կոստանդնուպոլիս (Լյուսակը երբեք Ստամբուլ տեղանվանումը չի օգտագործում): Շար չանցած, երբ հնչում է օրվա իշխանությունների «Կամ թրքացիր, կամ հեռացիր» սպառնալիքը, ծնողները, վեց տղա զավակների ազգային ինքնությունը պահպանելու համար, հերթական անգամ փախչում են Լիբանան, որտեղից Լյուսակը իր հայ-

վորման օրրանը, հանուն հավատի բախումների թատերաբեմը, ներկա Անատոլիայի այս տարածքը 1915-17 թթ. վերածվում է մի ընդարձակ փորձադաշտի, որտեղ իրականանում է անիրականանալիս, իրագործվում է անիրագործվելին:

Քանի որ ամեն արգելք վերացվում է, անկարելին դառնում է կարելի, նույնիսկ անխուսափելի, հատուկ կազմակերպության դահիճներին հնարավորություն է ընձեռնվում բորբոքել երևակայությունները, սպանողի նորանոր ձևեր հղանալ: Չնայած տվյալ դեպքում ձևն առանձնապես կարևոր չէր, կարևորը Հայաստանն առանց հայի թողնելն էր:

Բայց գոհերին ինչ անելին, վերապրողներն այդքան դիակների մեջ ինչպես ապրեին: Ըստ իրենց՝ վերապրողների իսկ վկայության՝ երկար ժամանակ նրանք նախընտրել են լռել, հայացքներն ասել են այն, ինչ լեզուն չի կարողացել ասել, մարմնով են արտահայտել անարտահայտելին: Անգամ նրանք, ովքեր խոսել են, որոշակի ոչինչ չեն պատմել: Վախեցել են խճճվել անկարագրելին նկարագրելու թնջուկում: Նման տարակերպության պատճառներից մեկն այն է, որ չնայած աննախադեպ բռնություններին՝ վերապրելու բնագործ հաղթահարել է բռնության մոլորակը: Ի վերջո, անանվանելի ինչ ժառանգություն այստի փոխանցելը հետագա սերունդներին, անցումը աննկարագրելից անասելիությանը ինչպես նյութականության: Որո՞նք էին այն նշանակիչները, որոնք այստի նպաստեին անփոխանցելի այժմեականացմանը՝ մամիը, բանը, ատելությունը:

«ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ԼՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԵԼԻ՞ Է ԽՈՍԵՅՆԵԼ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ»

Հիշողությունը հետապնդում է մեզ, ցեղասպանության իրողությունը հանգեցնում է հետևյալ տարամտությամբ՝ կարելի է այդ մասին ասել, խոսել, պատմել: Հիշողությունը հետապնդում է մեզ, ցեղասպանության իրողությունը հանգեցնում է հետևյալ տարամտությամբ՝ կարելի է այդ մասին ասել, խոսել, պատմել: Երբեմնի՝ վաղնջական քաղաքակրթության, քրիստոնեության սաղմնա-

կականությունն էլ ավելի ամրապնդելու համար Էջմիածին է ժամանում, ընդունվում հոգևոր Զեմարան: Երեք տարվա ուսումնասիրությունից հետո Վազգեն Վեհափառը նրան գործուղում է Վենետիկ, որպեսզի Միսիթարյան միաբանությունում լրատեստն սրանսա ու հոգևոր կոչման արժանանա: Մակայն Վենետիկում Լյուսակը որոշում է իր վերապրող հայրենակիցների «խեղված հոգիները ոչ թե քարոզներով սփռի, այլ՝ բուժել»: Նա փոխադրվում է Ֆրանսիա, բազում խոչընդոտներ հաղթահարելով՝ հոգեվերլուծաբան է դառնում: Եվ ամբողջ կյանքում մասնագիտական գործունեությամբ, գրքերով, հավատարիմ է մնում կոչմանը:

ԹԱՐԳՄԱՆԻԶ

ՀՆԱՐԱՎՈՐ Է

ություն է ընձեռնվում բորբոքել երևակայությունները, սպանողի նորանոր ձևեր հղանալ: Չնայած տվյալ դեպքում ձևն առանձնապես կարևոր չէր, կարևորը Հայաստանն առանց հայի թողնելն էր:

Բայց գոհերին ինչ անելին, վերապրողներն այդքան դիակների մեջ ինչպես ապրեին: Ըստ իրենց՝ վերապրողների իսկ վկայության՝ երկար ժամանակ նրանք նախընտրել են լռել, հայացքներն ասել են այն, ինչ լեզուն չի կարողացել ասել, մարմնով են արտահայտել անարտահայտելին: Անգամ նրանք, ովքեր խոսել են, որոշակի ոչինչ չեն պատմել: Վախեցել են խճճվել անկարագրելին նկարագրելու թնջուկում: Նման տարակերպության պատճառներից մեկն այն է, որ չնայած աննախադեպ բռնություններին՝ վերապրելու բնագործ հաղթահարել է բռնության մոլորակը: Ի վերջո, անանվանելի ինչ ժառանգություն այստի փոխանցելը հետագա սերունդներին, անցումը աննկարագրելից անասելիությանը ինչպես նյութականության: Որո՞նք էին այն նշանակիչները, որոնք այստի նպաստեին անփոխանցելի այժմեականացմանը՝ մամիը, բանը, ատելությունը:

Արդյոք հոգեվերլուծական գիտությունների ազդեցությամբ եկել է ժամանակը, որ վերապրողների շուրթերով խոսեն մեռածները: Ավելին՝ հաջորդ սերունդները, որպեսզի շարունակեն իրենց գոյությունը, պետք է հողին հանձնեն անթաղ մեռելներին: Միաժամանակ՝ կարելի է անթաղ մեռելների մասին խոսել այնտեղ, որտեղ պետական-պաշտոնական հրահանգով է մեկ միլիոն հինգ հարյուր հազար մարդկային էակ խողխողվել, 20-րդ դարում ի հայտ եկած տարածուն, հարածուն ժանտախտի գոհը դարձել:

Ի վերջո, վերապրողների մեղքը ո՞րն է: Մեռնելու համար ծնված չլինելը, ողջ-ողջ հողին հանձնված չլինելը: Մարդասիրական կազմակերպություններն են աջակցել, որ նրանք տարագրվեն իրենց բնօրրաններից, անհայրենիք դառնան: Բռնագաղթածների գավակների վրա ցեղասպանությունն ինչ հետևանքներ կթողնի, հոգեխախտման կենթարկի, թե՛ անսփոփ սգի կմատնի:

Քանի որ նրանց մեռելները չեն դիվանակվում, այսինքն դիակները հողին չեն հանձնվում, հաջորդ սերունդներն առերեսվում են այնպիսի գրոյցների, որոնք բառերով, մի քանի սերունդ անց երջանիկ ապագա են խոստանում:

Ժառանգականության շղթան հիշողությունը, թե՛ հիշողության բացակայությունն է ամրապնդում: Արդյոք ուրվականների խորհրդանշական վերադարձի տեսքով հայտնվող դիակ-

ներն են հավանում վերապրողների հիշողությունը, թե՛ հիշողության իսպառ կորստի ուրվականային ամենուրեքությունը՝ այնպես, որ ոչ մի երևակայություն չկարողանա դրոշմել խարանդով: Փոխանցությունն ինչպես իրականացնել: Նման իրավիճակում ինչպես բառերով արտահայտել անարտահայտելին, եթե ոչ հիմնախնդրի անդրադարձի բուժական միջոցներով: Ուստի, ամենևին զարմանալի չի թվա, եթե մի կյանքը չբավականացնի «այսքան ողբերգական» ճակատագրի վերջնագծին հասնելու համար:

«ԽՁՈՒՆ ՈՒ ԺԱՌԱՂԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ»

Ցեղասպանությունը սահմանելու համար իրավական հիմնավորումն արդեն անխուսափելի է դարձել: Հակառակ դեպքում Հայոց ցեղասպանության իրողությունը ոչ ոք չէր ընդունի: Իրավական հիմնավորմամբ է, որ այստի երաշխավորվի ցեղասպանության ժխտումից անցումը ժխտման ընդունմանը:

Հակառակ դեպքում ցեղասպանությունը տեղի ունեցած կհամարվի միայն հայերի երևակայությունում և կամ, ինչպես կարծում էր Բեռնար Լևին, «իրադարձության հայկական տարբերակը» կդառնա՝ ձևակերպում, որով բորբոքվում է առանց այն էլ Հայաստանի հանրապետության անկախության հոչակումից հետո կարծես փոքր-ինչ մոռացության մատնված ցեղասպանության ճանաչման պահանջի վերքը:

Ցավոք, բացի ցեղասպանության ընդունման իրավական-խորհրդանշական ձևից, մյուս բոլոր ձևերն արդյունավետ չդարձան, տասնյակ տարիներ շարունակ սոսկ փաստերի կուտակում, այսինքն՝ արյան պարտքի միտված Իրողության անդրադարձեր մտացին:

Ցեղասպանության Իրողությունից վերապրողների կյանքում մնացել է, իհարկե, վերքի պստուցը, որը գոյատևում է արևահոսությամբ, ասել է թե՛ իմաստավորվում արյան պարտքի հատուցման ակնկալիքով: Հայերի վերքը չունի այլ բուժամիջոց, բացի նոր արյան ներարկումից, որը թերևս կասեցնի բաց վերքի չդադարող արևահոսությունը:

«ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՆՔՆԱՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ»

Մտահայեցական առումով, սակայն, ցեղասպանության հանցագործությունը չի ժխտում ամեն իրավասություն: Յեղասպանությունը, որ այսօր դարձել է մտածողության հետևաբանական ուսմունք, ցանկացած նման մտայնության ժխտման տնտեսական հիմնավորում, որպես հիմնարար տեսություն՝ ցեղային արյան բաղադրությունը մաքրագործելու թաքուն հավակնություն չի դրսևորում: Նույնիսկ թուրք փորձագետներն են հավաստում, որ «այժմ թուրքերի երակներում շար ավելի օրսար՝ մոնղոլական, չինական, պարսկական, հունական, կովկասյան, ռուսական, նեգրական, քան զուր թուրքական արյուն է հոսում»: Ջուրայունության նման ձգտումը ցեղային գերակայության հասնելու միտում չունի, ինքն իրեն կամայականորեն աշխարհին տիրելու իրավասություն չի վերագրում:

կայական հորինումներում: Դա նշանակում է արդյոք, որ հարակից մեկնաբանությունն իր տեսանկյունի կողմով միայն մի՞ ցտորական այլաբանություն բացահայտող ձևակերպում կունենա՞ այն դեպքում, երբ անտեսանելի կողմը նույն այդ այլաբանության կառուցվածքային թերության պատճառով կսահմանափակվի սպանդի բուն գործողության ձևակերպումով: Տվյալ հայրը, որը մեր հռոմեա-կանոնական մշակույթում ներկայացնում է Երրորդությունը՝ առանց երբեք կարողանալու ընդգրկել Սուրբ Գրության ձևակերպմամբ՝ *ամբողջ բնակավայրը*, ինքնին միաստվածության չափազանց անպարփակ ծավալում չի ընդգրկում, որի շերտադասությունը զուգակցում է տվյալ Հորն իր սկզբնական-նախնական մեծած Հոր տարբերակին՝ տարբերակ, որին իր հերթին սատարում է աստվածային ծագումնաբանությունը: Հարկ կա՞ արդյոք հիշեցնել երկու՝ ներկայացուցչական ու վերաբարձրական տրամաբանությունների զուգակցման ան-

Քանի որ կառուցվածքային առումով մենք դատապարտված ենք նման անդիմադրելի մղմանը, ինչ ենք անում այդ մղման ընթացքում, հենց նույնը չենք որոնում, այսինքն՝ այդ տեսակա-նի նկատմամբ մեր առօրյան չենք կանոնավորում, որոշակիացնում, պարզեցնում, ճշգրտում, վերահսկում, նման որոնումը հենց մեր ցանկությունից չի բխում:

Բայց մեր ցանկությունը հեռու չէ՞ այն պարտադրանքներից, որ մենք վերագրում ենք նման միջավայրի տեսակա-նին:

Հենց Հոր սերն է, որ գործում է առանց մեր իմացության: Եթե մենք Լաքանի առաջադրած եռատմամբ անդրադառնանք հայրական գործառույթին, իրավունք ունենք ինքներս մեզ հարցնելու՝ հանրային միջավայրում ու մեր դիտարկած երևույթներում այդ հայեցակարգերից յուրաքանչյուրին ինչ դեր է վերապահված:

Այլ կերպ՝ փոխանցության գործառույթը, ինչպիսի ենթամաս էլ ունենա,

Ի հակադրություն այն ամենի, ինչը բացահայտում են պետական թրթածրարները, «ոչինչ իմանալ չուզելու» մտայնությանը մի այլ խոչընդոտ էլ է արձագանքում՝ ինչպես հաստատել «երբեք տեղի չունեցածի»՝ տեղի ունեցած լինելն այն ժամանակներում, երբ «ցեղասպանություն» եզրույթը դեռ ստեղծված չէր:

Այդ ժխտման ու խորհրդանշական համարկման անհնարիության միջև ինչպես զոհերի, այնպես էլ դահիճների առջև հասնում է քաղաքական դիրքորոշման ու դիրքորոշման քաղաքականության հարցը: Այսինքն՝ մնում է պարզել, որ հնարավոր է հաղթահարել ժխտումը, այնպես, ինչպես կանխակա-յուն է հաղթահարվում:

«ԱՆՀԱՅՐ ՈՐԴԻՆԵՐԻ ԳՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ»

Նիկեայի տիեզերական ժողովից ընդհուպ 20-րդ դարը, խաչի ճանապարհի վերջին հանգրվանը, Հայրն իր

ՉԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԾԵԼ

Եթե ընդունենք, որ 20-րդ դարն ընթացավ ինքնահաստատումից ինքնավերարտադրման անցմամբ, պետք է նկատենք, որ ապամշակույթակա-նացումը, որը քողարկում է, դիցուք, «Մաքրոնալդի» տարածման գաղտնիքը, ծավալվում է իր բոլոր հետևանքներով, հետևանքներ, որոնք մինչև իսկ գիտական հիմնավորում են ստանում: Բայց ցեղասպանության արդի մեկնաբանությունում ակնհայտ է վատթարը: Ամեն կերպ օրինականացնել ժառանգականության շղթան՝ նշանակում է կանխորոշել, թե ով հոսանքի ուղղությամբ, ով հոսանքին հակառակ պիտի ապրի, ընդհանրապես՝ ով պիտի ապրի, ով չապրի, և նա, ով ապրի, ում անվամբ պիտի ապրի:

«ՀԱՅՐԵՐԻ ԱՆՎԱՐ»

Քաղաքական հայրասպանությունում՝ առասպելական հոր հոգեվարքից սկսելով՝ ցեղասպանության ոճրագործությունը լոկ հայրերի ճանաչողության բարձրակետը պիտի դառնար, որոնց անվամբ համաշխարհային նոր հրահանգները ամեն կերպ ձգտում են մեր մշակույթում անձնավորել հայրերի տառապանքը՝ մշակույթ, որը կրում է միաստվածության խոր ազդեցությունը: Բնականաբար հարց է ծագում՝ Երրորդ կողմի ասպարեզ գալը, որի հայրական փոխակերպությունը սեղմամիտի ձև ունի, կկարողանա՞ հաղորդել հոր խոսքը՝ այն խոսքը, որը հանուն քաղաքակրթման ձգտման ամենագոր ուժի՝ ամրապնդվի օրենքով, այսինքն՝ ընդհանրական դառնա:

Հարցադրման բուն էությունն իմանալն է, թե ինչ կերպ է իրականացվում մոտեցումը գերակա տեսությանը՝ կառուցվածքային, թե՛ օրենսդրական պատճառականությամբ: Քանի որ կառուցվածքայնությունը, եթե որպես այդպիսին գոյություն ունի, արտահայտվում է ֆրեյդյան իմաստաբանությամբ, մահվան բոլոր պատճառականություններից դուրս՝ անկախ այն բանից՝ գտնվում է ցեղասպանությունն իրագործածների ուղեղների ենթադրյալ ծալքերում, թե՛ որպես հետևանք սփյուռքը կազմավորածների երևա-

հնարիությունը: Խոսքն այս դեպքում արևմտյան միաստվածության մասին է, որտեղ Երրորդությունը որոշակիացած է գերագույն մեկնությամբ, ապա և արևելյանի, որտեղ Գրություններն են ստանձնել նույն առաքելությունը: Այս իրողությունից առաջանում է փոխանցության երկու կերպ՝ կամ նոր մարդու վերակայացման խոստմամբ, կամ հնի վերակայացմամբ, որն իր հերթին, հենց միայն դրամական դիվանագիտության տրամաբանությամբ, կարող է բացահայտել մեր ներկա հակամարտությունների հարթման անհնարիությունը:

Իսկ այն, ինչ առնչվում է մեծն Ես-ի՝ աստվածային մեծն Դու-ի՝ որպես Աստծո երևակայական շղթաբանությունների միջավայրի հարաբերությանը, սուկ բացահայտում է հայրական փոխակերպության գործառույթի տարբերությունների հարցը՝ միաստվածությունում ու բազմաստվածությունում: Ո՞վ է այդ Հայրը, հանուն ում են հակամարտում, իրար սպանում, որը հեռու լինելով մերձեցնելու հավակնությունից՝ ընդհակառակը, տրվում է ընդհանրականության տեսականների, և, անկախ մշակույթից, որպես գերակա միջավայր՝ առաջադրում է ոչ թե Հայրենիքի Հորը կամ Աստծուն, այլ՝ Մերը: Այն գերակա միջավայրը, որի ամենամահահարույց իրավիճակային ձևերը արյան պարտքը փոխարինում են իրական զոհերի երևակայական հատուցմամբ:

Եթե *Տոբեմը* և *Տարն* քաղաքակրթությունը հիմնում են մեղակցության վրա, այն մեղակցության, որն առնչվում է հոր սպանդին, ապա, ամեն դեպքում առասպելական պարտքը նախ և առաջ զուգակցվում է գոհունակությանը, որի գործադրման բացարձակ, գերակա և առաջնային իրավասությունը պատկանում է Հորը, Նախնուն, այսինքն՝ Աստծուն, որոնք իրականում մեծն Մյուսի ներկայացուցչություններն են: Յեղասպանությունը հանդիսանում է այն ճիգի ծայրահեղ աստիճանը, որի գերագույն նպատակը Հոր կամ Նախնու գերակա միջավայրին հասնելն է: Նախճիրները, պատերազմները բոլորովին այլ միջոցներ են: Նահատակների հանրությունը այդ նույն միջավայրը հասնելու համար մահվանից բացի այլ միջոց ունի:

ձևավորվում է երկու բաղադրատարրերի՝ Հոր կամ Իշխանության պարագլխի սիրո շուրջը: Հարաբերությունը իշխանության նկատմամբ սիրո հարաբերություն է, բայց միաժամանակ նաև գոհունակության: Դրանից ելնելով՝ միշտ էլ կարելի է ճշտել՝ իմանալու համար, թե ցանկացած բռնարարքում ով է կատարել առաջին հարվածը՝ ժողովուրդներին ընդարմացնելու, այնուհետև բուն նպատակը ավելի լավ իրագործելու համար: Ժողովուրդներին այդպես են կործանում:

«ԺՆՏՈՒՄ, ԹԵ՛ ԿԱՆԻՎԱՅՈՒՄ»

Որքան էլ տարօրինակ թվա, հայերի ճակատագիրը միջազգային դիվանագիտության ասպարեզում արժարժվում է միայն իրենց դատի պաշտպանության պահին: Անժխտելի է, որ երկար պատմության ընթացքում հայ ժողովուրդն անընդհատ վճարել է իր՝ ջերմեռանդ քրիստոնյայի արյան գինը: Սակայն մինչև հայկական հարցի միջազգայնականացումը ոչ մի վերջնական վճիռ չի կայացվել՝ չնայած Ազգերի լիգայի հայանպաստ որոշումներին, որոշ պետությունների ղեկավարների, դիցուք՝ Կլեմանտյի ու Վիլսոնի մարդասիրական հայտարարություններին:

Ամեն դեպքում, այս ցեղասպանության քաղաքականության բնույթը, ապա և պատմական շարունակականության խզման հասնելու միտումը մեզ մղում են կարծելու, որ ցեղասպանների հիմնական նպատակը նախճիրի ժխտումն է:

Եթե նկատի չունենանք վերջին՝ մի քանի խորհրդանշական ճանաչումները, պիտի ընդունենք, որ Արևմուտքի դիրքորոշումը ըստ էության «ոչինչ իմանալ չուզելու» դիրքորոշում է՝ սպանդի մասին որոշակի տեղեկատվություն ունենալով հանդերձ: Դա վերաբերում է հատկապես Գերմանիային, որը դաշնակից լինելու հանգամանքով մարզում էր թուրքական ռազմականացված՝ հայերի բնաջնջման հատուկ խմբերը: Ու պատմությունը կբացահայտի, որ վերջնական նպատակն իրագործելու համար նման ջանքերը կրկնապատկվել են:

այս նոր Գողգոթայի գրություններում առանց հոր ծնված որդիների համար գտնել է համապատասխան կարգավիճակ:

Ուխտագանացության ճախողման արձագանք դարձած, պետության մահվան հրամանը արդարացնելու համար փոթևոտ ջիհադի արդիականացմանը տրված անհավատ որդիների կոչը ուրիշ բան չէր, եթե ոչ ժամանակի ամենաազնավարական գեներին դիմելու միջոց՝ հանուն հասարակական կարծիքի ձեռնածության, որի արդյունավետությունը պիտի բացահայտեր առաջին աշխարհամարտը:

Կրոնի միջոցով գեների ձեռնածությանը դիմելու քաղաքականության ռազմավարությունն ու գեների միջոցով կրոնին դիմելու ձեռնածությունը քողարկում է կարևորը, մինչդեռ էականը պարզելն էր՝ պատկերացումների խառնաշփոթը պատճանն էր, թե՛ հետևանքը, ինչը հնարավոր դարձրեց Հիտլերի հայտնությունն ու սցինեստիստական «գիտական» հիմնավորումը:

Ըստ Լաքանի՝ կրոնը «երևակայականի խորհրդանշական իրականացումն» է, ուստի 20-րդ դարի ցեղասպանությունները դարձան հասարակական կապի նոր հիմնարարներ՝ իրականացնելով խորհրդանշականի երևակայականությունն ու բացահայտելով Իրականությունը: Դրա հետևանքն է ոճրի մշտնջենականությունը կամ իրականության ամորձատումը:

Նման պայմաններում, նկատի ունենալով արդի բնաջնջման միջոցները, կենսական գոյությունը պահպանելը դառնում է չափազանց դժվար: Այս տեսակետից դարակզքի ցեղասպանությունը, որն իրագործվեց արևմտյան սահմանադրությունը կրկնօրինակված վարչակարգի օրոք, ընդամենը սպանդի «քաղաքակրթության» իրագործմամբ պետական նոր ձևերի՝ ինքնահաստատման հասնելու հավակնություն էր:

Անկախ արդյունքից, նման նկրտումներից ենթական միայն այլակերպված կարող է ձերբազատվել: Նույնպիսի երկարատև ընթացքի արգասիք է եվ-

ՄԿԻՐԱՆՆԵՐԸ ԵՂ 7 րուական միաստվածությունը, որն իր հերթին ի սկզբանե, Առաքյալների փոխում, ինքնահաստատվեց՝ ժխտելով հրեա-քրիստոնեական քարոզչությունը, կանխակայելով արևելյան եկեղեցիների խրատաբանությունը:

Բաղձանքի արդյունաբերականացման հետ մեկտեղ, որի մասին Լաքանը խոսում էր դեռևս 1954 թ-ին, մենք կկարողանանք հասնել ինքնագոհության միջազգայնականացմանը:

Նման փաստարկումները արդիականության մի այլ ընկալում են թելադրում: Խոսքը համայնական, ազգային, ընդհուպ համաշխարհային ինքնության միջոցով երևակայականի ձևավորումների ծավալման մասին է՝ ինչպիսին էլ լինեն նրա մոլեռանդական, համարկական, ազգայնական և այլ տարբերակները, որոնք ի վերջո սոսկ հանրային հոգեգալության տարրական ախտանշաններ են:

Ի հեռուկա Քաղկեդոնի տիեզերական ժողովի, որն ընդունեց, որ Աստված կարող է մարդանալ, մեր դարը հանդերձյալ կյանքի հույսից ձերբազատվելուն հաջորդած հիասթափության ազդեցության ներքո աստվածացրեց մարդուն: Նման մտայնությունը, չնայած նախնական հավաստիացումներին, չի ենթադրում, այսպես կոչված, արդիականացող պետությունների մի այլ հարաբերություն Կրոնի ու Օրենքի նկատմամբ: Այս առումով իրավական համարվող երկրների սահմանադրությունը, որը ցեղասպանությունը պետական իրավասություն է համարում, առասպելական Հոր ու ժամանակագրական նախնիների միջև շփոթ չի հարուցի՝ այսինքն՝ խորհրդանշականն ու երևակայականը չի միախառնի:

Առասպելական ժամանակը Մյուսին պատկանող ժամանակն է, բայց այդ Մյուսին կարելի է ընտելացնել: Որովհետև, եթե Կայսրությունների քաղաքական առասպելը հիմնվում է պատրանքի առկայության վրա, այսինքն՝ ժողովուրդները ինքնահաստատվում են խորհրդապաշտական-կրոնական վարչակարգում, որոնց նախնիները սահմանված են եղել գոհաբերությունների բազմին ընծայաբերվելու համար, գերարդիական պետության կազմավորման համար պարտադիր է համարվում համայնքային ձգտումների դժվարիմացական հակահամարկման իրապաշտական պատրանքայնությունը, խորհրդագրական հայրականության լուծարումը: Այլ կերպ, երբ բռնատիրական պետությունները խորհրդանշական-քաղաքական մղումներով կայացնում են իրենց ինքնահաստատումը, միաժամանակ, Արևմուտքի սատարմամբ ու շահագրգռությունների հովանու ներքո կառուցում արդիականության տաճարները, անմիջապես հարց է առաջանում, թե ով կարող է այն Մյուսի վստահելի երաշխավորը դառնալ՝ Արևմուտքը, Արևելքը, ՄԱԿ-ը:

Ուրեմն՝ հնարավոր է բուժել ցեղասպանությունը: Վերարծարելով հարցը՝ մտում է պարզել, թե հիվանդանոցում բուժառու ինչպիսի բավարարում կստանա, եթե, իհարկե, հիվանդանոցն ինքնին պետական կոտորածի մաս չի կազմում, ինչպես քրիստոնեությունը Կոստանդիանոս կայսեր համար եղավ: Բոլոր դեպքերում, այն ամենից հետո, ինչ վկայակոչվեց ենթակայի ճակատագրի կապակցությամբ, հիմք չունենք կարծելու, որ բուժող բժիշկը կարող է ընդամենը գործիք դառնալ՝ օգտագործվելուց հետո նետվող ենթակա գործիք:

Թարգմանությունը՝ Գրիգոր ԶԱՆԻԿՅԱՆԻ

ՏԱՐԱԾՈՒՈՂ ԿԷՏԵՐ*

ՄԿԻՐԱՆՆԵՐԸ ԵՂ 5 րում ու տափաստաններում: Երբ քեզ հանդիպում եմ տարիներ յետոյ, ներկան չէ, որ տեսնում եմ, այլ այն աղջնակը, որը ներկայ է: Տեսնես, ինչ է անում Ռիս Ջանսընը, որն իր ամերիկեան երագները բաժանեց ինձ հետ ու մի օր էլ գլուխն առաւ-գնաց-հեռացաւ: Տակաին զգում եմ իրապատուկ բոլոր իրլանդացի Մարգրիտ Օ'Բրայնի, որն ինձանից երկու տարով փոքր լինելով հանդերձ ինձ մայրություն էր անում Միգուրի համալսարանում, Միգուրի նահանգում, Ամերիկայի սրտում, Միգուրի գետի ափում: Իրլանդիան ու իրլանդացիները միշտ էլ ինձ հմայել են: Մենք էլ նրանց պէս զգացական ժողովուրդ ենք՝ կառչած ողբերգական լարին, զգացական ու խելառ: Ողջին քեզ՝ Մարգրիտ Օ'Բրայն, ուր էլ որ լինես: Ես իմ ծնողներին չճանաչեցի: Ես որևէ երկիր չճանաչեցի: Տեղից տեղ գնացի և ոչ մի տեղի հետ չկապեցի: Որոշեցի աշխարհին նայել որպէս իմ տանը և ամէն տեղ բարև ասացի մարդկանց: Ես հենց այսպէս մինչև վերջ փնտռեցի մինչև որ քեզ գտայ:

Լենան բանաստեղծություն է գրում և այս ամառ ամուսնացաւ Լոս Անջելոսում: Նորան բանաստեղծություն է գրում և այս ամառ ամուսնացաւ Ժընևում: Ուղարկել է հարսանեկան լուսանկարը: Լաու տղայ է երևում Մարքը: Ինձ Ալպեան լեռներ են հրախիթել՝ Մոնթբլոնի մօտակայքում: Սակայն ես շարունակ յիշում եմ Բամսարը Կասպից ծովի ափին, առաջին ծովը և պարոն Բժիշկն ու իր դուստրը, որ ամէն օր նարնջենու ծաղիկներ էր բերում ինձ: Ինձ ամառանոց էին տարել բուժելու ջղերս, որը ըստ տնեցիների ու դոկտոր Փիլոսեանի, ցնցուկ էին: Այդ երբ է, որ իմ ջղերը ցնցուած չեն: Ամէն պարագայի: Հարցերը շարել եմ այստեղից մինչև Շանգհայ երկարող ստեղնաշարի վրայ և տակաին ոչ մի պատասխան չկայ: Նամակատուիդ դադարել է: Միայն գոյնզգոյն ծանուցումներ, որոնք անմիջապէս գամբիւղն եմ գցում: Իմ սենեակում աշխարհի շունչը կկայ: Իսկ Թոլեդոյի հինաուրց նեղ փողոցների պատերի շուքը տարածուել է մինչև Նիւ Միլֆլորդ ու Լիչֆիլդ: Այնտեղ հրէական մի տաճար տեսայ որը եկեղեցու էր վերածուել, սակայն ներսում մարդ չկար: Բնչ կը լինէր, եթէ եկեղեցիները մեհեանների վերածուէին:

Թերևս մարդիկ ձերբազատուէին յանցանքի զգացումից և վերջում տարբերություն չանէր այսպէս թէ այնպէս:

Ես ինչ ասեմ Ռուբէնին: Ո՛վ է երջանիկ, որ նա լինէր: Ամենքս էլ ընկել ենք ծուղակը, դուրս գալ չենք կարողանում: Հէնց առաջին օրուանից մեզ զլանում են ամէն ինչ: Գոնէ այդքան խոստումներ տուած չլինէին:

Կարծում էք չեմ փորձել: Այն, ինչ չեմ յիշում, ինձ չի պատկանում: Մինչև հիմա ոչ ոքի չեմ ասել, սակայն այլևս ժամանակն է ասելու: Ես կը դադարեմ, երբ նա մոռանայ ինձ: Փոխադարձաբար, նա կ'անէնայ, երբ փոշիանան յուշերս: Յուշերս կ'անէնան, երբ բանտարկւեն դներս, որոնք քայլ առ քայլ հետապնդում են ինձ քաղաքից քաղաք, ցամաքամասից ցամաքամաս, գիշեր ու ցերեկ, ուրախութեան թէ տրտմութեան պահերիս, դներս իս ու խելառ, որոնք փորձել եմ սանձել ամառ թէ ձմեռ, լեռներում ու տափաստաններում, սիրոյ ու խանդի, ատելութեան ու խանդադատանքի ժամերին, երբ առ երևոյթ խաղաղ է եղել ծովը, պայծառ՝ երկինքը և անձայրածիր՝ հորիզոնը: Արահետը բանականութեան և խելագարութեան հատման կէտում, աստուածութեան ու չարութեան միջև, հովուերգական սիրոյ ու անասնական կրքի միջև, երբ խաարում է ցերեկը, և անձրևի փոխարէն շանթ է թափում երկնքից, երբ առաջին հաղորդությունից յետոյ ծառանում է յովազառիծը՝ քանդելով, արինելով, լափելով մսերը: Յանկարծ իմաստագերծում է կեանքը: Միջոցում նստում է անգոյն պարապութիւնը և անթարթ նայում դիմացի պարապութեան: Ես գիտեմ, որ մենակ չեմ: Ամէն ոք ի վերջոյ պարտում է: Ես պարտուել եմ նոյնիսկ յաղթանակի պահին: Որովհետև դներս պոստած ինձ են նայում շարունակ: Այրել եմ յուշերի մատեանը որպէսզի օրը լինի անյուշ: Նա չի կարող երկու աստուածների երկրպագել: Կամ նիւթը, կամ աննիւթը: Ճիշտ են դներս: Խօս, բայց ճշմարիտ: Մերը սակարկութիւն չի ճանաչում: Եթէ սակարկութեան դնենք գաղափարը, ապա կը դառնայ պոռնկութիւն: Ահա թէ ինչու մարդիկ գոհում են գաղափարի համար: Կամ պիտի մարդ լինել, կամ չլինել:

Օգոստոս, 1989 - *Քրնտեփրը*
* «ՄԻ ՄԱՐԴ ՈՒ ՄԻ ԵՐԿԻՐ»

ՄԿԻՐԱՆՆԵՐԸ ԵՂ 7 ԷԼՊԻՍ ԿԵՍԱՐԱՅՅԱՆԸ ԵՎ «ԿԻԹԱՌ» ՀԱՆԴԵՍԸ

Գրանք փոխկապակցված են կրթության հիմնախնդիրներին և միաժամանակ եվրոպական քաղաքակիրթ մտտեցումների ու ճաշակի ձևավորման ենթատեքստն ունեն:

Գրականություն

1. Տեն «Կիթառ»: Հանդէս ամսօրեայ: 1862-1863, Կ. Պոլիս: Հրավէր Հայկազն օրիորդաց: Խմբ.-փնտրէն՝ Ե. Կ. Տ. Հայրսի (Էլիպս մայրապետ Տողրամանյան-Կեսարացյան): Տպ. Ռ. Յ. Քիւրքճեան, 8 էջ: Ենթադրելի է, որ կիթառը նմանեցրել է կնոջ մարմնին ու նրա մեղմ հնչյունները՝ կնոջ ձայնին:
2. «Կիթառ»-ի համարներում փայտագրված որոշ էսսեներ խմբագրուիին ստորագրել է Ե.Կ.Տ. Հայրսի:
3. «Ծաղիկ» (Կանանց յարուկ պարկերազարդ շաբաթաթերթ), ԺԹ փարի (1906), թիւ 17, փայագր. Սագեան, Կ. Պոլիս (Ղալաթիա), էջ 389:
4. Գառնիկ Սրեպիանյանի «Կենսագրական բաշարան»-ում (Հայ մշակույթի գործիչներ) հիշատակվում է երեք համար, ինչը իրականությանը չի համապատասխանում: Տեն հր. Բ (Ժ-Մել), «Սովետական գրող» հրատ., Ե., 1981, էջ 107 (328):
5. «Ծաղիկ» (Կանանց յարուկ պարկերազարդ շաբաթաթերթ), ԺԹ փարի (1906), թիւ 17, փայագր. Սագեան, Կ. Պոլիս (Ղալաթիա), էջ 390:
6. Կեսարացյան Էլիպս, Յառաջարան, «Կիթառ», Կ. Պոլիս, թիւ 2, 1862, էջ 12:
7. Կեսարացյան Էլիպս, Յառաջարան, «Կիթառ», Կ. Պոլիս, թիւ 2, 1862, էջ 12:
8. Այդ մասին մանրամասն փնէ Էլիպս Կեսարացյան, Էսսեներ, Բանաստեղծություններ, Նամակներ, Աշխատասիրությամբ՝ Նաիրա Համբարձումյանի, Ե., 2025, Էդիթ Պրինս, 272 էջ:
9. Կեսարացյան Է., Նամակների առ ընթերցասեր հայրսիս, Կ. Պոլիս, փայ. Քիւրքճեան, 1879, 110 էջ:
10. Կեսարացյան Է., Նամակների առ ընթերցասեր հայրսիս, 1879, 110 էջ: Կեսարացյանի բանաստեղծությունները փայտագրվել են հեղինակի հրատարակած «Կիթառ» հանդեսում և «Նամակների առ ընթերցասեր հայրսիս» ժողովածուում

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 30-ին՝ ժամը 14-ին, ՀԳՄ կլոր սրահում տեղի կունենա Աղասի Այվազյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գրական հանդիսություն:

Մայիսի 2-ին՝ ժամը 14-ին, ՀԳՄ կլոր սրահում տեղի կունենա «Պոեզիա» հանդեսի գինեձոնը:

Հայաստանի գրողների միություն

<p>Գրական Թերթ</p> <p>ԻՄՐԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ</p> <p>Նորայր Աղայան, Լիլիթ Արզումանյան, Պետրոս Դեմիրճյան, Անիտա Դոլովանյան, Ազատ Եղիազարյան, Գորգեն Խանջյան, Մամվել Կոսյան, Էդվարդ Միլիտոնյան, Հրայր Մարիթեկյան:</p>	<p>Գլխավոր խմբագիր՝ Կարինե ԽՈՒԴԻԿՅԱՆ</p> <p>Հրատարակում է «ՀԳՄ ՀԿ «Գրական թերթ» խմբագրություն» ՍՊԸ-ն:</p> <p>Տպագրվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:</p> <p>Վկայական՝ 02Ա 051126: Գրանցման թիվ՝ 1175: Ծավալ՝ տպ. 2 մամուլ: Տպաքանակ՝ 500: Գինը՝ 100 դրամ: Լոյս է տեսնում յուրաքանչյուր ուրբաթ:</p>	<p>Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների արտահայտած փնտախոսքերին: Արտադրության դեպքում հղումը «Գրական թերթին» պարտադիր է: Տպագրությունն իրականացրել է «Կան ԱՐՅԱՆ» ՍՊԸ-ն՝ ՀԳՄ «Լ. Զ. ՍՅՈՒՄԵԼՅԱՆ» փայագրարարը:</p> <p>0019 երևան 19, Մաքչալ Բաղրամյան պող. 3, էլ. փոստ՝ grakantert@gmail.com</p>
--	--	---